

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2023

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	8
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	21
3.6. 1-85 թեժ գիծ	22
4. Լրատվական ծառայություն	23
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	26
5.1. Դասընթացներ/սեմինարներ	27
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	29
5.3. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության և ՀՀ մարզպետարենների հետ	30
5.4. Վեոլիա Գրուպի ԲՈՎ ստանդարտների ինքնազնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՈՎ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և աղապտացման աշխատանքներ	30
5.5. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ	30

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-
որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն
ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Երևանյան խճուղով անցնող, գործող D=500մմ պողպատե ջրագծի վրա, Էլեկտրական
մալուխների վաքերի (տաշտակների) տակ հայտնաբերվեց վթար: Քանի որ փորման աշխատանքներ տաշտակների
տակ իրականացնել անհնար էր, ուստի Շիրակ տեղամասի կողմից կատարվեց ջրագծի փոխարինում ներանցման
միջոցով: Արդյունքում կառուցվեց D-160մմ ՊԷ L-10մ նոր ջրագիծ, խնայվեց 2 լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Շիրակացի 50ա շենքի կոյուղագծի՝ ՊԿԱԾ-ով փոխարինման աշխատանքների
շրջանակներում փորված խրամուղում ի հայտ եկած երկու ջրագծերից D=80մմ և D=50մմ պողպատե հայտնաբեր-
վեցին մի շարք վթարներ: Քանի որ D=50մմ պողպատե ջրագիծը հանդիսանում էր տվյալ շենքը սնուցող ջրագիծ,
ուստի քայքայված ջրագիծը որոշվեց հանել շահագործումից և շենքը սնուցել հարևանությամբ անցնող D-80մմ
ջրագծից: Արդյունքում շահագործումից հանվեց D=50մմ L=36մ պողպատե ջրագիծ, խնայվեց Q=0,5 լ/վ ջրաքանակ:



Գյուղ Մայիսյան

● Շիրակ տեղամասի Մայիսյան գյուղում տեղի էր ունեցել վթար 2-րդ փողոցի տներից մեկի բակում: Վթարվել
էր փողոցը սնուցող D-100մմ ջրագիծը: Քանի որ ջրագիծը քայքայված վիճակում
էր և ենթակա չէր վերանորոգման, ուստի որոշվեց ներանցման
միջոցով փոխարինել: Արդյունքում շահագործումից հանվեց D=100մմ
L=50մ պողպատե ջրագիծ, ներանցում կատարվեց D=50մմ ՊԷ ջրագիծ, խնայվեց
Q= 1 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սպիտակ

● Մյաննիկյան փողոցում գտնվող թիվ 1
դպրոցի հարևանությամբ հայտնաբերվեց գաղտնի
վթար Q= 2լ/վ ջրաքանակով D = 125մմ պողպատե
ջրագծի վրա: Շահագործումից հանվեց D = 150մմ, L
= 170մ և D = 125մմ, L = 100մ ջրագծեր: Արդյունքում
տնտեսվեց Q= 5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Նոյեմբերյան



● Նոյեմբերյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ջորական գյուղի պոմպակայանից դեպի Նոյեմբերյան քաղաքը սնող $D=520$ մմ պողպատե ջրատարի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվեց $Q=12$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Չարենցավան

● Չարենցավան քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 6-րդ թաղամասը սնող պոմպի էլքի $D=110$ մմ ՊԷ ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 2$ լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:





Քաղաք Երևան

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ագաթանգեղոս 7 շենքի դիմաց $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 9$ լ/վ ջրաքանակ:




● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Իսակովի պողոտայով անցնող $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=2.5$ լ/վ ջրաքանակ:

● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Եղվարդի խճուղում գտնվող գորամասի հարևանությամբ անցնող $D = 200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



● Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Բաղրամյան 58 հասցեի հարևանությամբ անցնող $D = 50$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 7$ լ/վ ջրաքանակ:

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Նազարբեկյան 2 շենքի մոտով անցնող $D = 150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 2,5$ լ/վ ջրաքանակ:



● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Թաիրով գոտում Գասպարյան 20 շենքի մոտ գտնվող դիտահորի մեջ $D=32$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



Գյուղ Եղվարդ

● Գյուղ Եղվարդ /Նատի Թաղ/ թաղամասի ջրամատակարարուժն իրականացվում է $d=200$ մմ պողպատե խողովակով, որի $L=350$ գծ/մ հատվածը ամբողջովին քայքայված վիճակում էր գտնվում և հաճախակի էին վթարները: «Արաբկիր» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից ջրագծի քայքայված հատվածը փոխարինվել է $d=160$ մմ $L=350$ գծ/մ պ/ե խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում Նատի Թաղ թաղամասի և հարակից տարածքների ջրամատակարարուժն իրականացվում է անխափան:

Արագածոտնի մարզ

● Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից «Վեռլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Արագածոտն մարզի Արագածոտն 1-ին փողոց հասցեում իրականացվել են լայնածավալ աշխատանքներ: Նշված փողոցի ջրագիծը կառուցված է եղել 2001-2002 թվականներին համայնքի միջոցների հաշվին, անորակ խողովակաշարերով, որն էլ հաճախակի վթարների պատճառ էր հանդիսանում, ինչի արդյունքում խաթարվում էր Արագածոտն համայնքի ջրամատակարարման գրաֆիկը: Ընդհանուր առմամբ կառուցվել է $d=110$ մմ $L=600$ գծմ պլե ջրագիծ, շահագործումից հանվել է $d=100$ մմ $L=600$ գծմ վթարային վիճակում գտնվող պլե ջրագիծը, ինչի արդյունքում տնտեսվել է մոտ 2-4 լ/վրկ ջրաքանակ:



● Աշտարակ» տեղամաս. Արագածոտն մարզի Աղծք բնակավայրի տարածքում Հյուսիս-Հարավ նոր կառուցվող ավտոճանապարհի հարևանությամբ անցնող Ջորափի ՕԿՋ-ից դեպի Կոշ պոմպակայանը սնող $d=300$ մմ թուջ ջրատարը կառուցված է եղել 1950-ական թվականներին և տեխնիկապես գտնվում էր քայքայված վիճակում, որն էլ հաճախակի վթարների պատճառ էր հանդիսանում: «Վեռլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից վերակառուցվել է $d=250$ մմ $L=500$ գծմ պլե ջրագիծը: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է մոտ 5-7 լ/վրկ ջրաքանակ, որն ուղղորդվել է Կոշի պոմպակայան, ինչի արդյունքում ապահովվել է պոմպի անխափան աշխատանքը և բարելավվել է ջրամատակարարման շարունակականությունը: Ընդհանուր առմամբ կառուցվել է $d=250$ մմ $L=500$ գծմ պլե ջրագիծ, շահագործումից հանվել է $d=300$ մմ $L=500$ գծմ վթարային վիճակում գտնվող թուջե ջրագիծը:

Գեղարքունիքի մարզ

● «Գավառ» տեղամաս. Գեղարքունիքի մարզի գ.Գանձակ Սարալանջի, Բաբաջանյան և Սախարովի փողոցների ջրագիծը կառուցվել էր 1984 թվականներին և գտնվում էր քայքայված, վթարային վիճակում: «Վեռլիա Ջուր» ՓԲԸ սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից կառուցվել է $d=20-32-50-63$ մմ $L=1333$ գծմ ջրագիծ: Սահմանազատման կետում տեղադրվել է 33 դիտահոր, փոխարինվել,



տեղադրվել և վերատեղադրվել են թվով 35 բաժանորդի ջրաչափեր:
 Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է 5լ/լրկ ջրաքանակ, բարելավվել է գ. Գանձակ Սարալանջի, Սախարովի և Բաբաջանյան փողոցների բաժանորդներին մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, ջրամատակարարման ժամային գրաֆիկը 9 ժամի փոխարեն դարձել է 16 ժամյա, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները:

Ջրահեռացման համակարգ

● «Արաբկիր» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Սունդուկյան փողոց 3 շենքի ջրահեռացումն իրականացվում էր $d=250$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=40$ զժ/մ հատվածը փաստված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=250$ մմ $L=20$ զժ/մ, $d=200$ մմ $L=20$ զժ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, իրականացվել են $d=250$ մմ $L=40$ զժ/մ կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:



● Բաղրամյան 86 շենքի ջրահեռացումը իրականացվում էր $d=200$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=30$ զժ/մ հատվածը փաստված էր: «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=200$ մմ $L=30$ զժ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, իրականացվել են $L=100$ զժ/մ կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Կիլիկիա թաղամաս, Լուսինյանց փողոցում $d=150$ մմ $L=12$ զժ/մ փաստված կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է $d=150$ մմ $L=12$ զժ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Վերանորոգվել է թվով 1 դիտահոր:



Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	719
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	13597
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	13970
Հոսակորուստի որոնում կորեյլատորով	մ	880
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	86
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3395
Կառուցված ջրագիծ	մ	8422
Կառուցված կոյուղագիծ	մ	1511
Վերացված գաղտնի վթարներ	հատ	11
Փոխարինված փական	հատ	51
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	287
Մաքրված դիտահոր	հատ	2015
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	8.1
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	858
Ջրահեռացման ցանցում	հատ	1241
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևնդունիչ	հատ	0

Դեկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1003	880	895

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	257	1	0	0	0	2	0	0	1	1	263
Փոխարինված	223	23	2	0	0	2	2	0	0	2	254
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	249	9	4	0	0	4	10	2	0	0	278
Ընդամենը	729	33	6	0	0	8	12	2	1	3	795

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 795 ջրաչափ: Կատարված աշխատանքների 92%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	150	291	68
2	Քանաքեռ-Զեյթուն	0	255	0
3	Սաշտոց	0	251	18
4	Շահումյան	0	222	18
5	Շիրակ	830	415	12
6	Արթիկ	140	103	0
7	Ապարան	0	65	0
8	Ալավերդի	2350	29	18
9	Աշոցք	0	1	0
10	Բերդ	245	23	12
11	Իջևան	0	68	8
12	Լոռի	70	218	0
13	Նոյեմբերյան	0	10	0
14	Սպիտակ	0	14	0
15	Ստեփանավան	1580	31	0
16	Թալին	0	12	0
17	Տաշիր	0	6	0
18	Չարենցավան	0	93	10
19	Աբովյան	0	94	21
20	Հրազդան	0	75	592
21	Կենտրոն	130	227	24
22	Հյուսիս	0	287	16
23	Հարավ	0	348	6
24	Էրեբունի	0	152	576
25	Արմավիր	0	146	0
26	Արտաշատ	0	140	0
27	Էջմիածին	0	184	0

28	Աշտարակ	2230	30	0
29	Արարատ	0	70	0
30	Մախիս	0	87	18
31	Գավառ	0	30	0
32	Սևան	700	67	0
33	Մարտունի	0	26	0
34	Վարդենիս	0	6	0
35	Ճամբարակ	0	26	0
36	Դիլիջան	0	50	16
37	Վայք	225	17	3
38	Եղեգնաձոր	110	12	0
39	Ջերմուկ	0	50	0
40	Սիսիան	0	32	0
41	Գորիս	0	48	0
42	Կապան	677	85	63
43	Մեղրի	0	43	0
	Ընդամենը	9437	4439	1499

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել է հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանն ամբողջությամբ հոսանքազրկվել էր: Ձննության արդյունքում պարզվեց, որ բարձր լարման ապահովիչները այրվել են, իսկ բարձր լարման բաժանիչը չի աշխատում: Արդյունքում էլեկտրոսնուցումը դադարեցվեց և վերանորոգվեց բարձր լարման բաժանիչը, իսկ ապահովիչները փոխարինվեցին նորով:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում փաստվել էր ենթակայան մտնող բարձրավոլտ մալուխը և բարձրավոլտ ապահովիչները: Արդյունքում մալուխը վերանորոգվեց, իսկ ապահովիչները փոխարինվեցին նորով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում շարքից դուրս էր եկել հակադարձ փականը, որն էլ փոխարինվեց նորով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում օդամուղներից մեկի շարժիչի ստատորը շարքից դուրս էր եկել, որըն էլ ենթակա չէր վերանորոգման: Արդյունքում օդամուղը փոխարինվեց և տեղադրվեց ամբողջությամբ նոր օդամուղ: Մանր ճաղավանդակի քերիչ սանրերը խախտվել էին, որոնք կարգաբերվեցին: Ներկայումս սարքավորումները գործում են անխափան: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	63,450	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	56,406	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	152,584	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	66,519	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	113,512	9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,492	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,898	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	3,550	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 223 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 188 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.12.2023 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 613,577 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. դեկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	675,881	584,581	86,5
	Իրավաբանական անձ	32,274	29,006	89,9

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	746,945	598,314	80,1
	Իրավաբանական անձ	37,829	27,559	72,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 7823 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4624 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 12.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2288	1385	376	4049
	Իրավաբանական անձ	421	121	33	575
	Ընդամենը	2709	1506	409	4624

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ դեկտեմբեր ամսին փոխարինված 4624 ջրաչափերի մոտ 41 %-ը (կամ 1915 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 239,529 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Դեկտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,598 մլն. դրամ (106 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ

SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ /

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Դեկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 245 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 29.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2023թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
30,485	4,150,031,187	17,342	1,976,865,337	901	182,606,712	13,143	2,173,165,850	11,024	1,275,744,699

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 57 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.01.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,974	2,432
Բնակիչ-բաժանորդներ	7,726	1,655
Իրավաբանական անձեր	3,248	777

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 383.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.01.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (ստորատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	717,679	597,262	83.22	36,696	27,592	74.92
	Առանց ջրաչափի	29,266	1,052	3.59	1,054	10	0.76

Տվյալների բազայում 01.01.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	888,937	381,165	42.88	40,435	7,213	17.84

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5693 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1313 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2470	2028	81.9
գ.Պոռշյան	1705	1172	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6014	1955	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 18136, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 16324, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4600, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5423, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2760, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4542 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7831 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրելու իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	272	124,070	22,662,889

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի ղեկտեմբեր ամսվա շարունակականության տվյալը կազմում է 96.5%, ինչը նույնն է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 57 ՃԿՓ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը՝




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2023թ-ի ղեկտեմբեր ամսին 2022թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 115լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 267 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 7735 կՎտ.ժ (1.52%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 6 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 6 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 2037 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կավելանար 5698 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 108 էլ. հաշվիչ: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՌԻՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 8,128,928 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 29 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 21 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 223 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 188 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինչպես նաև տեղամասին կամ գոտիավորման բաժնին է փոխանցվել թվով 4 հասցեի ջրագծի վթարներ.

- ▶ Աթոյան անց. 2 (Er-9)
- ▶ Սդրյուր Սերոբ 10 (Ar-129)
- ▶ 2. Էստոնական 12/1 (Ma-4)
- ▶ Կումիտաս 19/8 (Ar-43)

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում հինգ հասցեում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- ▶ Ռոստովյան 34 (Er-9)
- ▶ Նովոսելցովո (Lor-1)
- ▶ Արշակունյանց 56/1 (She-104)
- ▶ ք. Էջմիածին Վ. Կոստանյան 82.(Ejm-10)
- ▶ Գ. Նժդեհի 56/1 (She-133)
- ▶ Ֆանտան պ/կ (Char-11)
- ▶ Բագրատունյանց 12 (She-158)

Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում երեք հասցեում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- ▶ Թաղևույան 2,4,6 (She-114)
- ▶ Խաչատրյան 6 (Ar-81)
- ▶ Արշակունյանց 54/1 (She-103)
- ▶ Մամիկոնյանց 29 (Ar-68)
- ▶ Արշակունյանց 50/1 (She-107)
- ▶ Մամիկոնյանց 40/1 (Ar-19)
- ▶ Չեխով 1 (She-90)
- ▶ Վ. Սարգսյան 8,10 (Shir-42)
- ▶ Բագրատունյանց 22/1 (She-28)
- ▶ Անտառավան 5թաղ 162 (Shir-44)
- ▶ Բագրատունյանց 22/3 (She-27)
- ▶ Խրիմյան Հայրիկ 6 (Shir-61)
- ▶ Սեբաստիա 30 (Sh-11)
- ▶ Անտառավան 3թաղ 182 (Shir-55)
- ▶ Արաբկիր 39փ. 2շ. (Ar-85)
- ▶ Սուրենյանց 11ա (Qz-30)
- ▶ Լիսինյան 10 (Shir-82)
- ▶ Աղբյուր Սերոբ 11/3 (Ar-103)
- ▶ Ռեպին 6/8 (Shir-48)
- ▶ Բորյան 4 (Shir-43)
- ▶ Ս. Գրիգորյան 10 (Shir-70)

Տեղադրված ընդհանուր 150 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նույնն է:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 44 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեդիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


● 2023թ. դեկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 341223 կՎտ/ժամ (39,18%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 152703 ԿՎտ/ժ/ամիս կամ 8.94 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեդիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է 506 579 ԿՎտ/ժամ 13.16%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում	թարմացում	1
SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում ԱՏՀ բազային	տեղորոշում	100
«ԱՏՀ» բազայում առկա պոմպերի և միացումների ուղղում, կողավորում	ուղղում	112
200 տեխնիկական պայմանների թվայնացում (440 բաժանորդ)	տեխպայման	200
էլեկտրամատակարարման (80), գազամատակարարման (13), նախագծերի թվայնացում, համաձայնեցում տեղամասերի հետ	թվայնացում	1
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2701
«ԱՏՀ»-ում առկա մարզերի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9508
«Բնտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	95
«Արևելք» և «Արևմուտք» ՇՏ-ների կողմից 2023թ-ի նոյեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան ծագրերի կազմում և մուտքագրում «ԱՏՀ» (աղ.1): Այս աշխատանքներին զուգահեռ տեղամասերից բերվել են նաև տվյալներ՝ ուղղումներ և թարմացումներ կատարելու համար (5462.9մ, 24 կետային տվյալ):	կետային տվյալ	24
«Բնտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	650
«ԱՏՀ-ն» նոյեմբերի 29-ից սկսած իրականացնում է Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Դեկտեմբեր ամսին կատարվել է 323 գործի թվայնացում՝ 462 բաժանորդ	բաժանորդ	462
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1839
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1852

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Արին-Բերդ Խարբերող ջրատարի վրա առաջացել էր վթար մոտ 150լ/վ մեծությամբ: Կազմակերպվեց ջրատարի կանգառ, որի ընթացքում վերատեղադրվեց ջրատարի վրա գտնվող d=600մմ թուջե խողովակաշարից անջատված 3 հատ խողովակ: Կանգառի ընթացքում, վերացվեցին նաև նախկինում առաջացած վթարները՝ գումարային 5լ/վ մեծությամբ:



● Կաթնաղբյուր 3 ջրատարի վրա գտնվող ՓՀԷԿ-ի ապամոնտաժման համար անհրաժեշտ էր ջրատարից ՓՀԷԿ ջրագծերի ապամոնտաժում: Կազմակերպվեց Կաթնաղբյուր 3 ջրատարի մասնակի կանգառ, որի ընթացքում ջրատարից անջատվեցին ՓՀԷԿ-ի խողովակները:



● Ապարան ջրատարի վրա գտնվող N1 ՓՀԷԿ-ից առաջ գոյություն ուներ $d=200$ մմ-ով միջանկյալ միացում՝ Ապարանի և Շոր-Շոր ջրատաների միջև: Փականի խափանված լինելու պատճառով փականից արտահոսքը խանգարում էր ՓՀԷԿ-ի աշխատանքին և ազդում էր արտադրողականության վրա: Կազմակերպվեց ջրատարի կանգառ, որի ընթացքում ապամոնտաժվեց ՓՀԷԿ-ից առաջ գտնվող $d=200$ մմ փականը և տեղադրվեց $d=100$ մմ փական՝ փակ վիճակում: Կառուցվեց նոր $d=300$ մմ միջանկյալ միացում ՓՀԷԿ-ից հետո՝ Ապարան Շոր-Շոր ջրատարների միջև:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:


● Քաղաք Մասիսի Արարատյան 3/4 քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի քլորագիծը և քլորացված ջրագծի վրա տեղադրվել է թողարկ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● Քաղաք Գառնի, Գառնի քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի տրման քլորաջրի կետը փոխարինվել է նոր կետով:



● Քաղաք Դիլիջան, Գոլովինո մաքրման կայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




● Քաղաք Մարտունի, Ծակ քար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը:

● Քաղաք Երևան, Չորաղբյուր քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի պահեստային կոնտեյնների միացումը և հնամաշ նյութերը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գյումրի, Կապս քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած բաժանարար հանգույցը (manifold) փոխարինվել է նորով:



● Քաղաք Վայք, Մալիշկա քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի փասաված քլորագիծը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● Քաղաք Վեդի, Ուրբցաձոր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի 500 գ/ժ արտադրողականությամբ կոլբան փոխարինվել է 100 գ/ժ արտադրողականության կոլբայով:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 43569 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10589 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8359 զանգ (78,9%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2230 զանգ (21,1%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 32980 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 24471 զանգ (74,2%), իսկ մարզերինը՝ 8509 զանգ (25,8%):

● 2022թ. դեկտեմբեր ամսվա համեմատ՝ 2023թ. դեկտեմբեր ամսին 3,83 %-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 16,20 %-ով:

● 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 2023թ. դեկտեմբեր ամսին 75%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 86%-ով՝ 5 բույսերից ավել զանգերի քանակը և 85%-ով՝ հայտարարությունների լուսուժն ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

● 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 2023թ. դեկտեմբեր ամսին 20,13%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2022	2023	Տարբերություն
		Դեկտեմբեր	Դեկտեմբեր	
Առևտրային	Ընդամենը	10198	10589	3.83%
	Երևան	8113	8359	3.03%
	Մարզեր	2085	2230	6.95%
Շահագործում	Շահագործում	28382	32980	16.20%
	Երևան	20330	24471	20.37%
	Արարիկի	3021	4408	45.91%
	Քանաքեռ-Զեյթուն	2486	1965	-20.96%
	Մաշտոց	2723	3199	17.48%
	Շահումյան	2824	2897	2.58%
	Շենգավիթ	3506	4944	41.02%
	Կենտրոն	2761	2691	-2.54%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1271	2348	84.74%
	Էրեբունի	1738	2019	16.17%
	այդ թվում կոյուղու վթար	165	228	38.18%
	այդ թվում դիտահորի խցանում	5773	9258	60.37%
	ՄԱԲԶԵՐ	8052	8509	5.68%
	Հարավ	3419	4292	25.53%
	Հյուսիս	4633	4217	-8.98%
այդ թվում կոյուղու վթար	43	33	-23.26%	
այդ թվում դիտահորի խցանում	2777	3217	15.84%	
Ընդամենը	38580	43569	12.93%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Դեկտեմբեր ամսվա կարևորագույն իրադարձությունը «Վեոլիա Ջուր» ընկերության սպասարկման տարածքի բնակավայրերի 2024 թվականի ջրամատակարարման ժամանակացույցի հրապարակումն էր: Այն ընկերության պաշտոնական կայքէջում տեղադրվելուց բացի, հրապարակվեց նաև ֆեյսբուքյան էջում, որտեղ նշվեց, որ ճիշտ է, ժամանակացույցը նախորդ տարվա համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել, սակայն հանրապետության տասնյակ բնակավայրերում բարելավվել է ջրամատակարարումը: Աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են, հատկապես նվազագույն ջրամատակարարում ունեցող բաժանորդների ժամանակացույցի բարելավման ուղղությամբ, ինչը հատկապես խիստ հրատապ է մարզերում:



Ընդհանուր առմամբ, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Հանրային կապերի բաժնի կողմից փորձ արվեց հնարավորինս ամփոփել 2023 թվականին կատարված աշխատանքները՝ ցույց տալով ամբողջ տարվա ընթացքում ՎեոլիաԹիմի ջանքերն ու ներդրումը:

Շարունակելով մարզերում Վեոլիա Ջրի իրականացրած ջրաշինարարական մեծ աշխատանքների լուսաբանման թեման հաշվետու ամսում Գեղարքունիքի մարզի Քյավառ և Լոռու մարզի Ֆորտունա թիվիների հետ ամփոփեցինք մարզերում 2023 թվականին իրականացված աշխատանքները: Ներկայացվեցին մարզերում կառուցված ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցերը, լուծված տասնյակ խնդիրները, որոնք տարիների պատմություն ունենին:

Լոռու մարզում ընթացող աշխատանքներին Հանրային կապերի ծառայությունը անդրադարձավ նաև առանձին հրապարակումներով: Մասնավորապես, Թումանյան համայնքում 150 բաժանորդի համար կառուցված 2 կմ ջրագծի և մուտքագծերի աշխատանքներին: Իսկ Վանաձոր քաղաքում, «Առափնյա» ՕԿՋ-ից 450 գծամետր պոլիէթիլեն ջրագիծ կառուցելով լուծվեց քաղաքի Բաղրամյան 2 նրբանցքի, Տավրոս թաղամասի անհատական տնատիրությունների և Շիրակի խճուղու 28, 30 շենքերի՝ ընդհանուր 80 բաժանորդների ջրամատակարարման հարցը: Վանաձորում շարունակվեցին Գերմանական KFW բանկի կողմից ջրամատակարարման նոր ցանցի կառուցմանը զուգահեռ հին ջրագծերը շահագործումից հանելու աշխատանքները: Վանաձորցիների համար նախատեսված նվեր էր նաև «Լոռի» ջրի մաքրման կայանի նորակառույց «Մալիտակ ջուր» գետային ջրընդունիչներից առաջինի շահագործումը: Վերջինս գետի հունից վերցրած ջուրը խողովակաշարով լիարժեք ուղղվելու է մաքրման կայան, իսկ այնտեղից էլ Վանաձորի՝ Զուլիաջյան, Դիմաց և Խնձորուտ թաղամասեր: Դրանով փաստորեն լուծվեցին ձմռանը, սառցակալումներով պայմանավորված, նշված թաղամասերում ջրամատակարարման հետ կապված խնդիրները:

Քանի որ ձմեռը հարմար ժամանակաշրջան չէ նոր աշխատանքներ սկսելու համար, հետևաբար դեկտեմբերին ավելի շատ լուծվում էին համակարգում առաջացող խնդիրներն ու վթարները: Հանրային կապերի ծառայությունը այդ աշխատանքների լուսաբանմամբ հանրությանը ներկայացրեց սպասարկվող բնակավայրերում և ինժեներական կառույցներում ընթացող աշխատանքները որպես կայուն և շարունակապես զարգացող համակարգ:

Մասնավորապես, Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոցի ջրագիծը տարիներ առաջ կառուցվելով կոյուղագծին զուգահեռ, կոյուղերից քայքայվել էր և դարձել էր շահագործման համար ոչ պիտանի: ՎեոլիաԹիմը փոխելով 400 գծամետր հատված՝ փողոցին մատակարարվող ջուրը դարձրեց առավել որակյալ և անվտանգ: Նմանատիպ խնդիր կար նաև Եղվարդի Նատի թաղամասում: Այստեղ ևս, ներանցման եղանակով փոխելով 350 գծամետր ջրագիծ՝ ՎեոլիաԹիմը թաղամասի ջրամատակարարումը դարձրեց որակյալ: Նոր ջրագծերով ապահովվեցին Կոտայքի մարզի Արգել գյուղի 20-րդ փողոցը, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Խաչատրյան փողոցը և այլ բնակավայրեր: Բարելավվեց Շիրակի մարզի Զիթհանքով, Լանջիկ, Քարաբերդ մեծաձախ բաժանորդ հանդիսացող գյուղերի ջրամատակարարումը: Ճնշման կարգավորիչ փական տեղադրելով՝ կարգավորվեց Աշտարակ քաղաքի անհատական տնատիրությունների հատվածի ջրամատակարարումը: Հաշվետու ամսում ավարտվեցին նաև ջրաղբյուրների վրա ջրաչափերի տեղադրման աշխատանքները: Այսպիսով, աղբյուրները միացված լինելով «Լոկատոր» համակարգին, թույլ կտան տեսնել և վերահսկել աղբյուրների արտադրած ջրաքանակը, հնարավորություն կտան օպերատիվ արձագանքել ամենափոքր իսկ խնդիրներին: Շարունակելով Վեոլիա Ջուր-SIՄ համագործակցությամբ խնդիրների լուծման բարի ավանդույթը՝ այս անգամ Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմի հետ լուծվեց Վարդաշեն թաղամասի 9-րդ փողոցի կոյուղագծի հարցը:

Դեկտեմբերին քիչ չէին նաև համակարգում արձանագրված վթարները, որոնց Հանրային կապերը արձագանքել է օպերատիվորեն՝ հնարավորինս արագ տեղեկացնելով սպառողներին ջրանջատվող տարածքի, աշխատանքների



ընթացքի և ջրամատակարարման վերականգնման ժամի մասին: Առանձին նյութերով անդրադարձ է եղել «Արին-Բերդ» ջրամբարի ելքի 700 մմ-ոց խողովակաշարի վթարին, «Արգնի 2-Երևան» ջրատարի վրա առաջացած 6 վթարների վերացման աշխատանքներին և Սևան-Մարտունի ճանապարհով անցնող «Օսկար-Մարտունի» 620 մմ-ոց ջրատարի վթարին: Բոլոր դեպքերում էլ ՎեոլիաԹիմը աշխատել է արագ և ջրագրկված բնակավայրերի ջրամատակարարումը վերականգնել հայտարարված ժամից էլ շուտ: Վերացվեց նաև Նոյեմբերյան քաղաքն ու հարակից Կողբ, Բերդավան, Դովեղ բնակավայրերը սնող սարերով և ձորերով անցնող 520 մմ-ոց ջրատարի վրա հայտնաբերված գաղտնի վթարը վայրկյանում 12 լիտր ջրակորստով: Իսկ «Կաթնաղբյուր» պոմպակայանի 13 խորքային պոմպերից մեկի վթարը վերացվեց՝ այն փոխարինելով գերմանական ժամանակակից «Վիլո» ֆիրմայի նոր պոմպով:

Վեոլիան, հավատարիմ մնալով իր որդեգրած շարունակեց Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին օգնելու իր ծրագրերը: Այս անգամ էլ, Վեոլիա հիմնադրամը մաս դարձավ «Ազնավուրը» հիմնադրամի կողմից արցախցիների տրամադրված հումանիտար օգնությանը: Ըստ որի՝ Հայաստանի 9 քաղաքներում և հարակից համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների 0-35 ամսական 800 երեխաներ 5 ամիս շարունակ կապահովվեն մանկական սնունդով (նպարեղեն և կաթնախառնուրդ) և հիգիենայի պարագաներով: Տեղեկատվությունը լուսաբանվեց ինչպես զանգվածային լրատվամիջոցներով, այնպես էլ հրապարակվեց ընկերության ֆեյսբուքյան էջում և ֆրանսալեզու courier.am կայքէջում:

սոցիալական պատասխանատվության գաղափարին,



Տարին ամփոփվեց 5 հաղորդագրությունից բաղկացած տեղեկատվական շարքով՝ 2023 թվականին Վեոլիայի ձեռքբերումների մասին (ջրամատակարարման տևողություն, ջրի որակ, ներդրումների ծավալ, տեղադրված ջրաչափեր, պետություն լճարված հարկեր), որոնք փաստում են բոլոր ուղղություններով ընկերության առաջընթացի մասին:

Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացման համար ներդրվել է

3.8 մլրդ. ՀՀ դրամ

#ՎԵՈԼԻԱՆԹՎԵՐՈՎ

Դե իսկ տարվա վերջին օրը, Վեոլիա ջուրը շնորհավորեց բոլորի Ամանորն ու Սուրբ ծնունդը՝ մաղթելով, որ 2024-ը մեր երկրին ու ընտանիքներին բերի խաղաղություն, սեր ու լիություն: Նաև ներկայացրեցին, թե մի շարք երկրներում ամանորյա ինչպիսի ավանդույթներ կան, որոնք անմիջականորեն ջրի հետ են կապված: Ամբողջ ամիս հրապարակումներ են եղել նաև ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, ինչպես նաև վթարային և պլանային ջրանջատումների մասին:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Երևան ՇՏ-ի թվով 180 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց և
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»:



● Ղեկավարվելով ՀՀ կառավարության 21-ը ապրիլի 2023 թվականի N 583-Ն որոշմամբ հաստատված էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոնների պահանջներով և «ՀՍՏ 312-2009_Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբեր շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներով, հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Ընկերության էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի ուսուցման և որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները Բաժինը, «Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի ուսուցման, որակավորման հանձնաժողովի» հետ համատեղ Ընկերության թվով 23 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ «Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի որակավորման» դասընթաց,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց
- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:




- Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Բաժինը Ընկերության Առևտրային տնօրինության թվով 634 աշխատողի համար կազմակերպեց ստորև ներկայացվող 2 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:
 - ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
 - ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:




- ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 1 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 2 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.
 - ▶ «Քլորակայանի պատասխանատու անձի մասնագիտական որակավորման» դասընթաց/գիտելիքների ստուգում,
 - ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց:

2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 1 քլորակայանում, 1 ՋՄԿ-ում, 3 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 1 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Վայոց Ձորի մարզի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի, 2023 թվականի դեկտեմբերի 19-ին, Ընկերության «Հարավ» Շահագործման տնօրինության «Ջերմուկ» շահագործման տեղամասում ՈԱԱ բաժնի համակարգմամբ, անցկացրեց «Հրդեհաշիջումը» «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Ջերմուկ» տեղամասում թեմայով հատուկ տակտիկական ուսուսնավարժություն:

5.4 ՎԵՈՂԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտների պահանջներով, հաշվետու ամսում իրականացրել է թվով 1 Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի (Երթնեկությունը աշխատավայրում) հայերեն լեզվով թարգմանության աշխատանքներ:

● Հաշվետու ամսում իրականացվել է Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման թվով 1 ստանդարտի (Երթնեկությունը աշխատավայրում) ինքնագնահատման աշխատանքներ:

● Միաժամանակ իրականացվում են գնահատված ստանդարտների Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

5.5 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՄՊ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՈՎ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում, Ջրամատակարարման և Ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների անվտանգ կազմակերպման և իրականացման նպատակով, Ընկերության շահագործման տեղամասերին է տրամադրել թվով 669 ճանապարհային ժամանակավոր նշան, թվով 345 ճանապարհային նախազգուշացնող կոն, թվով 224 ճանապարհային ժամանակավոր նշանի հենարան, թվով 224 շարժական ցանկապատ, թվով 370 փաթեթ անվտանգության ժապավեն և այլ տիպի անհրաժեշտ միջոցներ:

● ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է և այդ առնչությամբ պարբերաբար իրականացվում են կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am